ԼՂԻՄ-Ի ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Արմենպրեսի թղթակիցները հաղորդում են. ԼՂԻՄ-ից ընտրված ժողովրդական դեպուտատ Զ. Բալայանը այսօր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի առավոտյան նիստում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Ա. Ի. Լուկյանովին հանձնեց հետևյալ բովանդակությամբ հայտարարություն.

Մենք գիտակցում ենք՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը միատարր չէ: Դա տրամաբանական է, դա բնական է: Եվ մեզ հաշիվ ենք տալիս, կարծելով, որ ոչ բոլորն են հավասարապես կիսում Լեռնային Ղարաբաղի բնակչության 80 տոկոսը կազմող հայության մտահոգությունը: Մտահոգության զգացումը արդեն ոչ թե գալիք օրվա, այլ այսօրվա համար: Ցավալի է, եթե ոմանք չհասկանան կամ չուզենան հասկանալ մեզ, դրա համար ունենալով «իրենց» պատճառները: Մենք՝ Սումգայիթ և շրջափակում տեսածներս, ոչ թե խղճահարություն և նույնիսկ կարեկցանք ենք հայցում մեր նկատմամբ, այլ թեկուզ ըմբռնողություն: Մեր համաքաղաքացիների հարաճուն տագնապի ըմբռնողություն, որոնց այսուհետև և ամեն օր ողբերգություն է սպասում, ըստ էության վտարում՝ իրենց երկրից: Այսուհետև և ամեն օր, որովհետև ս/թ սեպտեմբերի 25-ից արդեն գործում է համապատասխան սահմանադրական օրենք Ադրբեջանական ԽՍՀ-ի իբր սուվերենության մասին: Թեև հարցը սուվերենության՝ որպես այդպիսինի մասին չէ: Հիշատակենք այն, որ այդ փաստաթուղթը իր տառով ու ոգով աղաղակող հակասություն է ԽՍՀՄ սահմանադրությանը: Եկեք չխոսենք մեր հիմնական օրենքի որակի մասին: Այն գործող է, ու սրանով ամեն ինչ ասված է: Ասենք միայն, որ, քամահրելով իրենց հայրենիքում ապրող հայերի տարրական քաղաքացիական իրավունքներն ու նրանց ազգային անվտանգությունը, իսկ այդ իրավունքները, ըստ գաղափարի, կարծես թե պետք է ապահովվեն միջազգային համաձայնագրերով և խորհրդային օրենքներով, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հատուկ օրենք սահմանեց...

Օրենքն ընդունեցին հենց այն ժամանակ, երբ ռեգիոնում արյուն է հեղվում, երբ ադրբեջանական երկաթուղով աղետյալ գոտի չեն փոխադրվում ոչ միայն հաց ու վառելանյութ, այլ պրոթեզներ անդամահատված երեխաների համար: Երկրի համար այս հիրավի օրհասական ու ճգնաժամային ժամանակներում, ասես յուղ լցնելով կրակին, ազդարարվում է ինքնավար մարզը լուծարքի ենթարկելու այդպիսի հնարավորություն. հիշեցվում է, որ ղեկավարությունը կարող է արտակարգ դրություն հայտարարել առանձին վայրերում, իմա՝ հայաբնակ շրջաններում՝ մտցնելով միայն և միայն Ադրբեջանական ԽՍՀ մարմինների կողմից իրականացվող կառավարման հատուկ ձևեր:

Այժմ, երբ ամբողջ երկիրը, կանգնած լինելով հազարավոր չլուծված պրոբլեմների առջև, ոչ թե պարզապես կողմնակի դիտողի նման հետևում է ռեգիոնի իրադարձություններին, այլ գործնականորեն ձգտում մարել ռեգիոնում բոցկլտացող հրդեհը, հանկարծ ընդունվում է մի օրենք, որը ընդգծված հանդգնությամբ տառապյալ ղարաբաղցիներին հիշեցնում է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն իրավունք ունի ազատորեն դուրս գալ ԽՍՀՄ-ից: Բայց եթե միայն դա լիներ: Հատուկ հոդվածով այդ իրավունքը իրականացվում է ժողովրդական քվեարկության (հանրաքվեի) միջոցով, որն անցկացվում է, իհարկե, իրենց իսկ Գերագույն խորհրդի որոշմամբ և միայն հանրապետության ամբողջ բնակչության շրջանում: Ինչպես տեսնում ենք, խոսքը բնավ էլ սուվերենության՝ որպես այդպիսինի կամ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավունքի մասին չէ միայն: Աննախադեպ բան է, և որևէ զուգահեռ անցկացնելը, մեղմ ասած, անտեղի է: Կոնկրետ դեպքում խոսքը վերաբերում է ամբողջականի ու նրա հայրենիքի ճակատագրին, այն բանին, որ Ադրբեջանական ԽՍՀ-ում համարյա 700 հազար հայերից մնացել է ընդամենը 180 հազարը, որոնք կոմպակտ կերպով ապրում են միայն ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում, որոնք հիմա, ինչպես տեսնում ենք, ցանկացած պահին, ինչպես պարզվում է, կարող են դուրս գալ ԽՍՀՄ-ի կազմից: Դուրս գալ նախաբնիկ բնակչության հետ միասին, որը հազարամյակներ շարունակ այստեղ հող է մշակում (կարծեմ, ըստ Լենինի, սոցիալիզմը նախ և առաջ ազգերի բարգավաճում է): Դուրս գալ հազարավոր պատմական հուշարձանների հետ միասին, որոնց մեջ կան համաշխարհային եկեղեցական մշակույթի և քրիստոնեական քաղաքակրթության գլուխգործոցներ: Դուրս գալ, թողնելով հայերի ու պապերի գերեզմանները՝ անկրկնելի խաչքարերով հանդերձ:

Դուք արդյոք մտածե՞լ եք այն մասին, հարգելի դեպուտատներ, որ դեռ դարեր առաջ ռուս և հայ ժողովուրդները արյուն են հեղել ընդհանուր թշնամու դեմ մղված համատեղ պայքարում միասնական ամբողջական պետության մեջ վերամիավորվելու համար: Իսկ ահա հիմա, դուրս պրծած լինելով օսման փաշաների կառչուն ճիրաններից, կարող է պատահել նորից հայտնվեն Թուրքիայի լծի տակ, որտեղ միայն

1915 թվականին կոտորվեցին մոտ երկու միլիոն մեր հայրենակիցներ:

Կարող են մեզ հանգստացնել, հիշեցնելով, որ ԼՂԻՄ-ը, այսպես ասած, ամուր նստած է ԽՍՀՄ սահմանադրության 87-րդ հոդվածի մեջ, որ բոլոր ինքնավար կազմավորումները, իսկ դրանք մեր երկրում 38-ն են, հաստատված են ԽՍՀ Միության կողմից, հետևաբար նրանցից յուրաքանչյուրի բախտը կարող է տնօրինել ԽՍՀ Միությունը, որ ԽՍՀՄ սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն բոլոր օրենքները և պետական մարմինների մյուս ակտերը հրատարակվում են հիմնական օրենքի հիման վրա և դրան համապատասխան, որ վերջապես Ադրբեջանական ԽՍՀ-ն, իր իսկ օրենքի տերմինաբանությամբ, «ԽՍՀՄ-ի անբաժանելի մասն է»՝ դրանից բխող բոլոր հետևություններով հանդերձ: Թեև հասկանում եմ, մենք իզուր տեղն ենք այսքան համառորեն վկայակոչում խորհրդային սահմանադրությունը: Բանն այն է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի օրենքը հրատարակված է միանգամայն ուրիշ սահմանադրության հիման վրա ու դրան համապատասխան: Մեջ եմ բերում նստաշրջանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովի ելույթի աղագրությունից մի հատված. «Ադրբեջանցի գաղթականները բոլորն էլ եկան մեր հանրապետություն, իսկ ահա հայերը ցրվեցին ուր պատահի: Դուք հասկացա՞ք, թե ինչ եմ ուզում ասել... Նոր ձևով պետք է գրել 70-րդ հոդվածը: Ձևակերպենք, որ հանրապետության հողն ու տարածքը անբաժանելի են, այսինքն ինչպես որ գրված է Թուրքիայի սահմանադրության մեջ...»:

Երկրի համար այսքան պայթյունալի ժամանակներում նման օրենքի ընդունումը ոչ միայն հիմնական հարցը տեղափոխում է ազգամիջյան երկպառակությունների ոլորտ, այլև անաքող նպատակ է հետապնդում՝ ուժային ճնշման ու շանտաժի մեթոդով ահաբեկել կենտրոնին, թույլ չտալ, որ նա գործի սահմանադրական ու դեմոկրատական միջոցներով:

Ստեղծված տագնապալի իրավիճակում, որը խիստ սրվեց ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական բնույթ կրող օրենքի ընդունման պատճառով, մենք՝ Լեռնային Ղարաբաղից ընտրված ժողովրդական դեպուտատներս, պահանջում ենք անմիջապես դադարեցնել այդ օրենքի գործողությունը և արագացնել Ղարաբաղի՝ ողբերգականորեն ձգձգվող հարցի քաղաքական լուծումը: